Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Նոյեմբեր

թիվ 11 (171)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Ալմելեռոա ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու, «Ազիմուտ ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման, ինչպես նաև մի շարք ՍՊԸ-ների և «Սթար Դիվայդ ՓԲԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Արմ և Արթ Չենջ Մարքեթ ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, «Իդրամ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՍՊԸ-ի «Քանաքեռ-Զեյթուն ՎՇ մասնաճյուղը հաշվառելու, «Յունիբանկ ՓԲԸ-ի «Էրեբունի մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 5 ՍՊԸ-ների նկատմամբ տուգանք կիրառելու և 3 արտարժույթի փոխանակման կետերի, 1 ՍՊԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 289Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 272-Ն որոշումը «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 273-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 6-ի թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 274-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

21 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 275-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 280-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման և կազմակերպության տարեդարձեր հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 281-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված 7,77, 15,55 և 31,1 գրամ քաշերով «Նոյյան տապան հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին

27 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Ալմելեռոա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 283Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Ազիմուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիան (որոշում թիվ 287Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Գռամ Գրուպ», «Էլվեր», «Էսկո Ֆինանս» սահմանափակ պատասխանատվությամբ և «Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման լիցենզիաները (որոշումներ թիվ 288Ա, 324Ա, 337Ա, 318Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Արմ և Արթ Չենջ Մարքեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 305Ա):
- ***Դադարեցվել է*** «Իդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Քանաքեռ-Զեյթուն ՎՇ» մասնաճյուղը (որոշում թիվ 338Ա):
- ***Գրանցվել է*** «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Էրեբունի» մասնաճյուղը (որոշում թիվ 1/1212Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 5 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1010000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/1035Ա, 1/1156Ա, 1/1177Ա, 1/1178Ա, 1/1187Ա) և 3 արտարժույթի փոխանակման կետերի, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1150Ա, 1/1173Ա, 1/1176Ա, 1/1151Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 289Ա որոշմամբ 2012 թ. նոյեմբերի 6-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 9.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 6.5%:***

*«Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 175-րդ, 176-րդ, 182-րդ, 194-րդ հոդվածները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ի 71-րդ և 74-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից տասներկու ամիս հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 2 ամսվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան և ներդրումային ծառայություններ մատուցող անձինք պարտավոր են համապատասխանեցնել իրենց գործունեությունը սույն որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան և ներդրումային ծառայություններ մատուցող անձինք տեղեկացնում են բոլոր թողարկողներին, որոնց հետ ունեն արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման գործող պայմանագրեր, այն մասին, որ նրանք պետք է սույն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ի 19-րդ կետին համապատասխան կնքեն ռեեստրի վարման պայմանագրեր:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի ««Անվանատիրոջ հաշիվների վարման նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 5/07-ը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշումը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հոկտեմբերի 2012 թ., N 272-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հոկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2012 թ. (ՀՀՊՏ N29 (442), 3.12.2012):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/10
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կենտրոնացված ռեեստրավարման և պահառության իրականացման կարգը:

2. Սույն կանոնակարգը չի տարածվում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի պահառության վրա:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Թողարկողը սույն կանոնակարգով նախատեսված հանձնարարականները, հարցումները և արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը և տեղեկատվությունը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում այն հաշվի օպերատորի միջոցով (միջնորդությամբ), որի հետ կնքվել է սույն կանոնակարգի 9-րդ գլխով նախատեսված պայմանագիրը:

4. Հաշվետերը (նրա լիազորված ներկայացուցիչը) սույն կանոնակարգով նախատեսված հանձնարարականները, հարցումները և արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը և տեղեկատվությունը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում այն հաշվի օպերատորի միջոցով (միջնորդությամբ), որի միջոցով բացվել է արժեթղթերի հաշիվը (որի միջոցով կնքվել է պահառության պայմանագիր):

5. Կենտրոնական դեպոզիտարիան մատուցում է պահառության ծառայություններ ենթապահառուներին, ինչպես նաև ցանկացած այլ անձի, որի համար օրենքի, սույն կանոնակարգի, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների համաձայն արժեթղթերի հաշվառման համակարգում բացվել է արժեթղթերի հաշիվ:

6. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանվում են արժեթղթերի հաշիվների բացման, վարման և փակման, արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների գրանցման, հաշվի օպերատորների կողմից հանձնարարականների ընդունման և Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցման մանրամասն կարգը և պայմանները, հաշվի օպերատորների նկատմամբ պահանջները, հաշվի օպերատորների հետ հաղորդակցման կարգը, ինչպես նաև սույն կանոնակարգով նախատեսված այլ դրույթներ:

ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

1) ***արժեթղթերի կենտրոնացված հաշվառման համակարգ***՝ թողարկողների, դրանց կողմից թողարկված արժեթղթերի, արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և նրանց պատկանող արժեթղթերի, ինչպես նաև արժեթղթերով իրականացված գործառնությունների վերաբերյալ տվյալների միասնական համակարգ, որը վարվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից (այսուհետ՝ արժեթղթերի հաշվառման համակարգ): Արժեթղթերի հաշվառման համակարգը ներառում է կենտրոնացված ռեեստրավարման և պահառության համակարգերը,
2) ***արժեթղթերի սեփականատերերի ռեեստր***՝ թողարկողի, դրա կողմից թողարկված անվանական արժեթղթերի և այդ արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ սույն կանոնակարգի 5-րդ գլխով նախատեսված տվյալների համակարգ,

3) ***հաշվի օպերատոր***՝ անձ, որը հաշվետիրոջից կամ թողարկողից ստացված հանձնարարականները և այլ տեղեկությունները (փաստաթղթերը) փոխանցում է Կենտրոնական դեպոզիտարիային արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների կատարման համար, ինչպես նաև օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրին համապատասխան միջնորդավորում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները,

4) ***գործառնություն***՝ արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցված արժեթղթի սեփականատիրոջ (անվանատիրոջ), թողարկողի կամ օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով նման լիազորություն ունեցող այլ անձանց հանձնարարականների հիման վրա իրականացվող գործողություն, որի արդյունքում տեղի է ունենում արժեթղթերի հաշվի բացում, արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների փոփոխություն, արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի մնացորդի փոփոխություն, արժեթղթերի հաշվառման համակարգում այլ տեղեկությունների գրանցում և (կամ) արժեթղթերի հաշվառման համակարգից տեղեկությունների տրամադրում,

5) ***կորպորատիվ գործողություն***՝ թողարկողի որոշմամբ տվյալ թողարկողի բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխություն՝ կանոնադրական կապիտալի ավելացման կամ նվազեցման նպատակով, որևէ դասի (տեսակի) արժեթղթերի հետգնում, ձեռքբերում կամ փոխարկում, բաժանում, համախմբում կամ թողարկողի վերակազմակերպում (բացառությամբ վերակազմավորման),

6) ***արժեթղթերի բաժանում***՝ ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

7) ***արժեթղթերի համախմբում***՝ ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

8) ***արժեթղթերի ձեռքբերում***՝ թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի ձեռքբերումը,

9) ***արժեթղթերի հետգնում***՝ թողարկողի կողմից իր կողմից տեղաբաշխված արժեթղթերի հետգնումը՝ բացառությամբ բաց ներդրումային ֆոնդերի արժեթղթերի,

10) ***արժեթղթերի փոխարկում***՝ թողարկողի՝ տվյալ դասի արժեթղթերի շրջանառությունից հանումը և չեղյալ համարումը (արժեթղթերի հաշվառման համակարգից հեռացումը) նույն թողարկողի կամ այլ թողարկողի արժեթղթերով փոխանակելու միջոցով,

11) ***հանձնարարական***՝ արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնություններ (բացառությամբ տեղեկությունների տրամադրման) կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ,

12) ***հարցում***՝ արժեթղթերի հաշվառման համակարգից տեղեկությունների տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք չեն կարող որակվել որպես հանձնարարական,

13) ***հաշվետեր***՝ անձ, որն ունի (որի անունով առկա է) արժեթղթերի հաշվառման համակարգում բացված արժեթղթերի հաշիվ,

14) ***ժամանակավոր հաշիվ***՝ թողարկողի ներկայացրած տվյալների հիման վրա արժեթղթերի հաշվառման համակարգում բացված արժեթղթերի հաշիվ, որտեղ հաշվառվում են այն սեփականատերերի արժեթղթերը, որոնց համար թողարկողի արժեթղթերը սույն կանոնակարգի 9-րդ գլխի համաձայն արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցելու ժամանակ արժեթղթերի հաշվառման համակարգում արժեթղթերի հաշիվ բացված չի եղել: Ժամանակավոր հաշվով որևէ գործառնություն կարող է իրականացվել միայն Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով հաշվետիրոջը նույնականացնելուց հետո:

8. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9. Արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցվում է սույն բաժնով նախատեսված հետևյալ տեղեկատվությունը՝

1) թողարկողների, նրանց կողմից թողարկված անվանական արժեթղթերի և այդ արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ (արժեթղթերի սեփականատերերի ռեեստր),

2) արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և նրանց պատկանող արժեթղթերի վերաբերյալ (արժեթղթերի հաշիվներ),

3) արժեթղթերով իրականացված գործառնությունների (ձեռքբերում, փոխանցում, գրավադրում և այլն) վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ, ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ ԱՅԴ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ

10. Արժեթղթերի հաշվառման համակարգում թողարկողի և նրա կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) թողարկողի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները, պետական գրանցում շնորհած երկիրը, հարկ վճարողի հաշվառման համարը (իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը),
2) արժեթղթերի տեսակը (դասը), տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում), անվանական արժեքը (առկայության դեպքում), տեղաբաշխված արժեթղթերի քանակը (ծավալը),
3) արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ՝
   ա. անունը և ազգանունը, իսկ իրավաբանական անձ սեփականատիրոջ դեպքում՝ լրիվ անվանումը,
   բ. անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի սերիան, համարը, իսկ իրավաբանական անձ սեփականատիրոջ դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը,
   գ. բնակության վայրը, իսկ իրավաբանական անձ սեփականատիրոջ դեպքում՝ գտնվելու վայրը, փոստային հասցեն,
4) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 6. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎ

11. Արժեթղթերի հաշիվ կարող է ունենալ ցանկացած ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ անձ: Անձը կարող է ունենալ մեկից ավելի արժեթղթերի հաշիվներ:

12. Եթե արժեթուղթը սեփականության իրավունքով պատկանում է երկու կամ ավելի անձանց (համասեփականատերեր), ապա համասեփականատերերի համար կարող է բացվել համասեփականատերերի արժեթղթերի հաշիվ:

13. Արժեթղթերի հաշվառման համակարգում արժեթղթերի հաշվի վերաբերյալ գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) հաշվետիրոջ անունը և ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը,
2) հաշվետիրոջ բնակության վայրը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը և փոստային հասցեն,
3) հաշվետիրոջ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի սերիան, համարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (դրա բացակայության դեպքում՝ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը),
4) հաշվետիրոջ բանկային հաշվի համարը և սպասարկող բանկի անվանումը (առկայության դեպքում),
5) արժեթղթերի հաշվի համարը և հաշվի բացման ամսաթիվը,
6) արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի քանակը և տեսակը,
7) եթե արժեթուղթը պատկանում է երկու կամ ավելի անձանց, ապա դրանցից յուրաքանչյուրի անունը, ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը), անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի սերիան, համարը (իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը), իսկ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ նաև յուրաքանչյուր սեփականատիրոջ մասնաբաժինը,
8) արժեթղթերի ձեռքբերման և այլ գործառնությունների գրանցման ամսաթվերը,
9) արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների (այդ թվում՝ գրավադրում, կալանք) վերաբերյալ տեղեկություններ,
10) օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ տեղեկություններ:

14. Արժեթղթերի հաշվառման համակարգում բացվող արժեթղթերի հաշիվների տեսակները և դրանց կարգավիճակը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

ԳԼՈՒԽ 8*. ԱՆՎԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՇԻՎ

15. Անվանատիրոջ հաշվում չեն կարող հաշվառվել այնպիսի արժեթղթեր, որոնք սեփականության իրավունքով պատկանում են անվանատիրոջը:

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

16. Անվանատիրոջ հաշվում հաշվառված արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները չեն գրանցվում արժեթղթերի հաշվառման համակարգում: Անվանատիրոջ հաշվի դեպքում արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցվում են անվանատիրոջ վերաբերյալ սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունները:

17. Անվանատերը պարտավոր է վարել գրանցումներ անվանատիրոջ հաշվում հաշվառվող արժեթղթերի վերաբերյալ, որոնք պետք է ներառեն սույն կանոնակարգի 13-րդ կետի 1-3-րդ և 6-8-րդ ենթակետերով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ տեղեկություններ յուրաքանչյուր անձի գծով, որի համար անվանատերը վարում է արժեթղթերի հաշիվ:

18. Անվանատերը, անվանատիրոջ հաշվում հաշվառված արժեթղթերի գծով քվեարկելու և այլ իրավունքների իրականացման ժամանակ, պետք է գործի իր հաճախորդի (տվյալ արժեթղթերի սեփականատիրոջ) ցուցումներին համապատասխան: Հաճախորդի պահանջով անվանատերը պարտավոր է նրան տրամադրել համապատասխան ֆորմատով թույլտվություն (լիազորագիր)՝ արժեթղթերով ամրագրված իրավունքների իրականացման համար:

ԲԱԺԻՆ 3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 9. ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

19. Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը Կենտրոնական դեպոզիտարիային հանձնելու համար թողարկողը կնքում է ռեեստրի վարման պայմանագիր հաշվի օպերատորի հետ, որտեղ հաշվի օպերատորը հանդես է գալիս Կենտրոնական դեպոզիտարիայի անունից՝ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

20. Ռեեստրի վարման պայմանագիր կնքելու համար թողարկողը հաշվի օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

1) տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի ցուցակը (բացառությամբ թողարկված, սակայն դեռևս չտեղաբաշխված արժեթղթերի), որը պարունակում է սույն կանոնակարգի 56-րդ կետով նախատեսված տեղեկությունները,
2) թողարկողի վճարային գործակալի վերաբերյալ տեղեկություններ, որն իրավասու է թողարկողի անունից կատարելու վճարումներ արժեթղթերի սեփականատերերին (առկայության դեպքում),
3) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ տեղեկություններ և փաստաթղթեր:

21. Սույն կանոնակարգի 20-րդ կետով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան գրանցում է արժեթղթերը արժեթղթերի հաշվառման համակարգում:

ԳԼՈՒԽ 10. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄԸ

22. Կենտրոնական դեպոզիտարիան բացում է արժեթղթերի հաշիվ անձի կողմից ներկայացված արժեթղթերի հաշվի բացման հանձնարարականի հիման վրա, որը Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցվում հաշվի օպերատորի կողմից: Արժեթղթերի հաշվի բացման ժամանակ ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

23. Եթե թողարկողի արժեթղթերը սույն կանոնակարգի 9-րդ գլխի համաձայն արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցելու ժամանակ տվյալ արժեթղթի սեփականատերը չունի արժեթղթերի հաշվառման համակարգում բացված արժեթղթերի հաշիվ, ապա այդ անձի համար բացվում է արժեթղթերի ժամանակավոր հաշիվ՝ թողարկողի հանձնարարականի հիման վրա:

24. Հաշվետերը պարտավոր է տեղեկացնել հաշվի օպերատորին արժեթղթերի հաշվի բացման ժամանակ տրամադրված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին: Սույն կետում նշված տեղեկությունները չներկայացնելու դեպքում թողարկողը, հաշվի օպերատորը և Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չեն կրում հաշվետիրոջը պատճառված վնասի համար:

ԳԼՈՒԽ 11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

25. Արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցումները կատարվում են հաշվի օպերատորի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցված հանձնարարականի, դատարանի որոշման հիման

վրա, ինչպես նաև օրենքով, սույն կանոնակարգով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ հիմքերով:

26. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է կատարել ուղղումներ արժեթղթերի հաշվառման համակարգում կատարված գրանցումներում դատարանի՝ ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

27. Կենտրոնական դեպոզիտարիան կարող է իր նախաձեռնությամբ կատարել ուղղումներ արժեթղթերի հաշվառման համակարգի գրանցումներում, եթե Կենտրոնական դեպոզիտարիան բացահայտում է, որ կատարված գրանցումը սխալ է կամ բացակայում է, և եթե գրանցման ուղղումը չի խախտում այլ անձանց իրավունքները:

ԳԼՈՒԽ 12. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

28. Թողարկողի և նրա կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունները արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցվում են թողարկողի դիմումի հիման վրա, որը Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցվում հաշվի օպերատորի կողմից: Համապատասխան դիմումների ձևերը և դրանց կից ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների կազմը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

29. Թողարկողի դիմումի հիման վրա արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցումները կատարվում են համապատասխան դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե սույն կանոնակարգով այլ ժամկետ նախատեսված չէ կամ թողարկողի դիմումն ավելի երկար ժամկետ չի սահմանում:

30. Եթե անձինք, որոնց արժեթղթերի հաշիվներում գրանցումները պետք է կատարվեն, որոշվում են թողարկողի դիմումում նշված կոնկրետ ամսաթվի հիման վրա, ապա գրանցումները պետք է կատարվեն այդ օրվա սկզբի (ժամը 00:00) դրությամբ արժեթղթերի հաշվառման համակարգում առկա տեղեկատվության հիման վրա, եթե թողարկողն իր դիմումում այլ ժամ չի նշել: Սույն կետում նշված դեպքերում թողարկողի դիմումի հիման վրա արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցումներն իրականացվում են ոչ ուշ, քան դիմումում նշված կոնկրետ օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

31. Կենտրոնական դեպոզիտարիան մերժում է թողարկողի դիմումի հիման վրա գրանցումների կատարումը, եթե դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են, կամ չեն համապատասխանում օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջներին: Դիմումը մերժելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է այդ մասին տեղեկացնել դիմումը ներկայացրած անձին՝ նշելով մերժման պատճառները:

ԳԼՈՒԽ 13. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

32. Կորպորատիվ գործողության իրականացման մասին թողարկողի կողմից հաշվի օպերատորի միջոցով ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի հաշվառման համակարգում գրառումներ է կատարում թողարկողի արժեթղթերի սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում հաշվառվող արժեթղթերի քանակի, դասի կամ թողարկողի (անհրաժեշտության դեպքում) փոփոխման մասին:

33. Թողարկողի վերակազմակերպման արդյունքում արժեթղթերի փոխարկման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի հաշվառման համակարգում համապատասխան գրառումներ է կատարում թողարկողի տվյալ դասի արժեթղթերի բոլոր գրանցված սեփականատերերի (անվանատերերի) արժեթղթերի հաշիվներում՝ ըստ նրանց պատկանող (նրանց անվամբ գրանցված) թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակի համամասնության:

34. Եթե կորպորատիվ գործողության իրականացման արդյունքում առաջացել են կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթեր, ապա այդ դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է թողարկողի պահանջով նրան տրամադրել գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը՝ նշելով նրանց պատկանող կոտորակային արժեթղթերը:

ԳԼՈՒԽ 14. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐՈՒՄԸ

35. Թողարկողի լուծարումից հետո նրա կողմից թողարկված բոլոր արժեթղթերը չեղյալ են համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

36. Բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը չեղյալ են համարվում (արժեթղթերի հաշվառման համակարգից հեռացվում են) միայն այդ բաժնետիրական ընկերության լուծարման, վերակազմակերպ-

ման արդյունքում գործունեության դադարեցման կամ այդ բաժնետոմսերի ամբողջությամբ փոխարկման դեպքում:

37. Արժեթղթերի մարման դեպքում դրանք չեղյալ են համարվում մարումից հետո՝ թողարկողի համապատասխան հանձնարարականի հիման վրա կամ մարման ժամկետի լրանալու հիմքով:

ԳԼՈՒԽ 15. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻՑ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

38. Կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային հանձնարարականների փոխանցման կարգը, հանձնարարականների ձևը և բովանդակության նկատմամբ պահանջները, դրանց հիման վրա արժեթղթերի հաշվառման համակարգում գրառումների կատարման պայմանները և ընթացակարգը (անհրաժեշտության դեպքում՝ նաև գրառումների հետ կապված դրամական վերջնահաշվարկի իրականացման ընթացակարգը) սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով, Կենտրոնական դեպոզիտարիայի և կարգավորվող շուկայի օպերատորի միջև կնքված պայմանագրով:

39. Արժեթղթերի այլ հաշվարկային (հաշվառման) համակարգի օպերատորի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային հանձնարարականների փոխանցման կարգը, նման հանձնարարականների ձևը և բովանդակության նկատմամբ պահանջները, դրանց հիման վրա արժեթղթերի հաշվառման համակարգում գրառումների կատարման (այդ թվում՝ տարբեր արժեթղթերի հաշվառման համակարգերի միջև դրանցում գրանցված արժեթղթերի փոխանցման) պայմանները և ընթացակարգը (անհրաժեշտության դեպքում՝ նաև գրառումների հետ կապված դրամական վերջնահաշվարկի իրականացման ընթացակարգը) սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի և համապատասխան արժեթղթերի հաշվարկային (հաշվառման) համակարգի օպերատորի միջև կնքված պայմանագրով:

ԳԼՈՒԽ 16. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

40. Արժեթղթերի փոխանցումը հաշիվների միջև արժեթղթերի փոխանցումն է փոխանցվող արժեթղթերի քանակով (ծավալով) մեկ արժեթղթերի հաշվի դեբետագրման և մյուս արժեթղթերի հաշվի կրեդիտագրման միջոցով:

41. Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի փոխանցումն իրականացնում է հաշվի օպերատորի հանձնարարականի հիման վրա, ինչպես նաև օրենքով կամ սույն կանոնակարգով սահմանված այլ հիմքերով:

42. Դրամական վերջնահաշվարկ պահանջող արժեթղթերի փոխանցումը (արժեթղթերի փոխանցում վճարման դիմաց) իրականացվում է նախապես սահմանված որոշակի ամսաթվին՝ արժեթղթերի դիմաց վճարման հետ միաժամանակ կամ դրանից հետո՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված կարգով:

43. Հաշվի օպերատորի կողմից ներկայացվող փոխանցման հանձնարարականում պարունակվող տեղեկությունների կազմը և հանձնարարականի ներկայացման կարգը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

44. Կենտրոնական դեպոզիտարիան մերժում է արժեթղթերի փոխանցման հանձնարարականը, եթե՝

1) փոխանցման հանձնարարականը չի համապատասխանում սույն կանոնակարգով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջներին,
2) փոխանցման հանձնարարականը տրվել է ոչ իրավասու անձի կողմից,
3) արժեթղթերի հաշվում առկա չեն փոխանցման հանձնարարականում նշված անհրաժեշտ քանակի արժեթղթեր,
4) առկա չեն անհրաժեշտ դրամական միջոցներ ֆինանսական պարտավորություններն իրականացնելու համար՝ վճարման դիմաց արժեթղթերի փոխանցման դեպքում,
5) գործարքի երկու կողմերի հաշվի օպերատորների կողմից ներկայացված փոխանցման հանձնարարականները տարբերվում են:

ԳԼՈՒԽ 17. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ

45. Արժեթղթերի գրավը գրանցվում է արժեթղթերի հաշվառման համակարգում գրավատուի հաշվի օպերատորի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա: Արժեթղթերի գրավի գրանցման հանձնարարականը պետք է տրվի գրավատուի կողմից:

46. Արժեթուղթը համարվում է գրավադրված՝ արժեթղթերի հաշվառման համակարգում դրա գրանցման պահից: Արժեթղթերի գրավադրման վերաբերյալ կատարվում է համապատասխան գրառում գրավատուի արժեթղթերի հաշվում:

47. Արժեթղթերի գրավադրման հանձնարարականում պարունակվող տեղեկությունների կազմը և հանձնարարականի ներկայացման կարգը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

48. Գրավադրված արժեթղթերի օտարման դեպքում գրավը գրանցվում է նոր սեփականատիրոջ արժեթղթերի հաշվում:

49. Գրավադրման դադարեցման հանձնարարականը հաշվի օպերատորին է տրվում գրավառուի կողմից:

50. Արժեթղթերի գրավով ապահովված պարտավորությունը կատարելուց հրաժարվելու դեպքում գրավադրված արժեթղթերը կարող են այդ պարտավորությունից բխող պահանջները բավարարելու նպատակով փոխանցվել դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից տրված հանձնարարականի հիման վրա, եթե այլ բան սահմանված չէ գրավատուի և գրավառուի միջև կնքված պայմանագրով: Սույն կետով նախատեսված դեպքում հաշվի օպերատորը և Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր չեն պարզել գրավադրված արժեթղթերի փոխանցման համար անհրաժեշտ իրավական հիմքերի առկայությունը և պատասխանատվություն չեն կրում արժեթղթերի փոխանցման արդյունքում պատճառված վնասների համար:

ԳԼՈՒԽ 18. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ

51. Արժեթղթերի (կամ արժեթղթերի հաշվի) սառեցումը (արգելադրումը) արժեթղթերի օտարման (փոխանցման) ժամանակավոր սահմանափակման վերաբերյալ արժեթղթերի հաշվառման համակարգում գրառումների կատարումն է:

52. Կենտրոնական դեպոզիտարիան սառեցնում է արժեթղթերը կամ արժեթղթերի հաշիվը հետևյալ հիմքերով.

1) դատարանի, քրեական հետապնդում իրականացնող մարմնի կամ օրենքով սահմանված այլ համապատասխան մարմնի որոշման հիման վրա,
2) հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա,
3) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ հիմքերով:

53. Արժեթղթերը կամ արժեթղթերի հաշիվը մնում է սառեցված, քանի դեռ արժեթղթերի հաշվառման համակարգում համապատասխան գործառնությունը չի գրանցվել, սառեցման համար հիմք հանդիսացող հանձնարարականը չեղյալ չի ճանաչվել կամ սառեցման դադարեցման հանձնարարական չի տրվել, կամ չի լրացել սառեցման համար սահմանված ժամկետը:

ԲԱԺԻՆ 4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 19. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

54. Թողարկողի գրավոր հարցման հիման վրա, որը փոխանցվել է հաշվի օպերատորի կողմից, Կենտրոնական դեպոզիտարիան 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակը:

55. Սույն կանոնակարգի 54-րդ կետով նախատեսված հարցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (դրա բացակայության դեպքում՝ թողարկողի լրիվ անվանումը և արժեթղթերի դասը), որի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը պահանջվում է,
2) ցուցակի կազմման ամսաթիվը,
3) ցուցակի տրամադրման ձևը՝ թղթային կամ էլեկտրոնային,
4) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

56. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) գրանցված սեփականատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը (ֆիզիկական անձանց համար), անվանումը, գտնվելու վայրը և փոստային հասցեն (իրավաբանական անձանց համար),
2) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը և սերիան (ֆիզիկական անձանց համար), հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան պետական մարմնի կողմից տրված նույնականացման այլ համարը (իրավաբանական անձանց համար),

3) գրանցված սեփականատիրոջը պատկանող՝ թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակը, ընդհանուր անվանական արժեքը և բաժնեմասը (տոկոսներով),
4) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ տեղեկություններ:

57. Կենտրոնական դեպոզիտարիան մերժում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակի տրամադրումը, եթե թողարկողի գրավոր հարցումը չի համապատասխանում սույն կանոնակարգի, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների պահանջներին կամ թողարկողը հրաժարվում է վճարել ցուցակի տրամադրման համար Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված վճարը:

ԳԼՈՒԽ 20. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ

58. Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկացնում է անձին նրա համար արժեթղթերի հաշիվ բացելու վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը գրավոր ձևով հրաժարվել է այդ իրավունքից:

59. Սույն կանոնակարգի 58-րդ կետով նախատեսված տեղեկացումը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
1) արժեթղթերի հաշվի համարը,
2) արժեթղթերի հաշվի բացման հանձնարարականը Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցած հաշվի օպերատորի անվանումը,
3) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ տեղեկություններ:

60. Սույն կանոնակարգի 58-րդ կետով նախատեսված տեղեկացումը հաշվետիրոջն է ուղարկվում էլեկտրոնային կամ թղթային եղանակով՝ ըստ հաշվետիրոջ ընտրության:

61. Արժեթղթերի ժամանակավոր հաշվի դեպքում սույն կանոնակարգի 58-րդ կետով նախատեսված տեղեկացումն ուղարկվում է այն թողարկողին, որի պահանջով բացվել է արժեթղթերի ժամանակավոր հաշիվը:

ԳԼՈՒԽ 21. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

62. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է իր ինտերնետային կայքում հրապարակել հայտարարություն արժեթղթերի հաշվառման համակարգում հաշվետու թողարկողի պահանջով կատարված գործառնությունների վերաբերյալ՝ թողարկողի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով պահանջը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

63. Սույն կանոնակարգի 62-րդ կետով նախատեսված հայտարարությունը պետք է պարունակի համապատասխան թողարկողի անվանումը, գործառնության կատարման ամսաթիվը (հնարավորության դեպքում) և սույն գլխով նախատեսված տեղեկությունները:

64. Արժեթղթերի (այդ թվում՝ լրացուցիչ թողարկված) գրանցման վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
1) արժեթղթերին շնորհված տարբերակիչ ծածկագիրը,
2) գրանցված արժեթղթի տեսակը (դասը),
3) արժեթղթերի անվանական արժեքը (առկայության դեպքում) և արժույթը,
4) արժեթղթերի քանակը:

65. Արժեթղթերի անվանական արժեքի փոփոխման վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
1) արժեթղթի տեսակը (դասը) և տարբերակիչ ծածկագիրը,
2) արժեթղթի նախկին և նոր անվանական արժեքները:

66. Արժեթղթերի փոխարկման վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
1) փոխարկվող արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը,
2) արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը, որին փոխարկվում են արժեթղթերը, եթե դրանք գրանցված են արժեթղթերի հաշվառման համակարգում,
3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված արժեթղթերի թողարկողի անվանումը, եթե թողարկողը փոխարկվող արժեթղթի թողարկողը չէ,
4) փոխարկման գործակիցը:

67. Արժեթղթերի չեղյալ համարելու վերաբերյալ հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝
1) չեղյալ համարվող արժեթղթերի տեսակը (դասը) և տարբերակիչ ծածկագիրը,
2) չեղյալ համարվող արժեթղթերի քանակը:

68. Բացի սույն կանոնակարգի 63-67-րդ կետերում նշված տեղեկություններից՝ Կենտրոնական դեպոզիտարիան կարող է հրապարակել նաև այլ տեղեկություններ:

69. Կենտրոնական դեպոզիտարիան սույն նախատեսված հայտարարությունները հրապարակում է միայն այն դեպքում, եթե բավարարված են օրենքով, սույն կանոնակարգով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով արժեթղթերի հաշվառման համակարգում համապատասխան գրանցումների կատարման համար սահմանված բոլոր պահանջները:

ԳԼՈՒԽ 22. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

70. Հաշվետերն իրավունք ունի իր հարցմանը համապատասխան ստանալ հաշվետվություն (տեղեկանք, քաղվածք) իր արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ:

71. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, ոչ ուշ, քան հաջորդ տարվա հունվարի 31-ը, հաշվետիրոջը էլեկտրոնային եղանակով տրամադրել հաշվետվություն հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ, եթե հաշվետերը գրավոր ձևով ներկայացրել է նման տեղեկատվություն ստանալու պահանջ և տրամադրել է համապատասխան էլեկտրոնային փոստի հասցե: Սույն կետում նշված հաշվետվությունը տարեկան մեկ անգամ հաշվետիրոջը տրամադրվում է անվճար:

72. Սույն կանոնակարգի 71-րդ կետով նախատեսված հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) արժեթղթերի հաշվի համարը,
2) հաշվետիրոջ անունը, ազգանունը (անվանումը),
3) արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (դրա բացակայության դեպքում՝ թողարկողի լրիվ անվանումը և արժեթղթերի դասը) և քանակը, անվանական արժեքը և արժույթը,
4) գրավադրված արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (դասը) և քանակը,
5) հաշվետվության կազմման ամսաթիվը,
6) ամսաթիվը, որի դրությամբ ներկայացված են հաշվետվությունում ներառված տեղեկությունները,
7) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 23. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

73. Հաշվետերն իրավունք ունի ստանալու հաշվետվություն իր արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ՝ իր կողմից ընտրված պարբերականությամբ կամ ժամանակահատվածի համար:

74. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, ոչ ուշ, քան հաջորդ տարվա հունվարի 31-ը հաշվետիրոջը էլեկտրոնային եղանակով տրամադրել հաշվետվություն իր հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ, եթե հաշվետերը գրավոր ձևով ներկայացրել է նման տեղեկատվություն ստանալու պահանջ և տրամադրել է համապատասխան էլեկտրոնային փոստի հասցե: Սույն կետում նշված հաշվետվությունը տարեկան մեկ անգամ հաշվետիրոջը տրամադրվում է անվճար:

75. Սույն կանոնակարգի 74-րդ կետով նախատեսված հաշվետվությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) արժեթղթերի հաշվի համարը,
2) հաշվետիրոջ անունը, ազգանունը (անվանումը),
3) հաշվետիրոջ բնակության վայրը (գտնվելու վայրը և փոստային հասցեն),
4) հաշվետու ժամանակահատվածում արժեթղթերի հաշվով կատարված բոլոր գործառնությունները՝ նշելով յուրաքանչյուր գործառնության գրանցման ամսաթիվը և հակիրճ բովանդակությունը,
5) հաշվետվության կազմման ամսաթիվը,
6) հաշվետու ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը,
7) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 24. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

76. Թողարկողը պարտավոր է հաշվի օպերատորի միջնորդությամբ Կենտրոնական դեպոզիտարիային տեղեկացնել՝

1) թողարկողի լուծարման վերաբերյալ որոշման ընդունման կամ թողարկողի նկատմամբ սնանկացման գործընթաց սկսվելու մասին,

2) թողարկողի անունից հանձնարարականներ և հարցումներ ներկայացնելու համար թողարկողի իրավասու ներկայացուցչի փոփոխության մասին,
3) Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ էական հանգամանքների մասին:

77. Արժեթղթերով հավաստվող իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման մասին թողարկողի որոշումը պետք է պարունակի կոնկրետ ամսաթիվը, որի հիման վրա որոշվում են այն անձինք, որոնց վրա տարածվում է այդ որոշումը:

ԲԱԺԻՆ 5. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐ

ԳԼՈՒԽ 25. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

78. Հաշվի օպերատորը պետք է ապահովի, որ արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցվի ժամանակին, և իր կողմից արժեթղթերի հաշիվների և արժեթղթերի հաշվառման համակարգի հետ կապված այլ գործողությունները կատարվեն իր իրավասության շրջանակներում, օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրին համապատասխան:

79. Հաշվի օպերատորը պարտավոր է միջնորդավորել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող բոլոր ծառայությունները, եթե այլ բան սահմանված չէ հաշվի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով: Եթե որևէ ծառայության մատուցումը տեխնիկական պատճառներով դարձել է բարդ կամ անհնար, ապա հաշվի օպերատորը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կենտրոնական դեպոզիտարիային այդ մասին:

80. Հաշվի օպերատորը պետք է համապատասխան վարչական և տեխնիկական միջոցներով ապահովի, որ իր կողմից Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցված տեղեկատվությունը և արժեթղթերի հաշիվների հետ կապված գրանցված տեղեկատվությունը պաշտպանված լինեն չթույլատրված օգտագործումից՝ ներառյալ դրա փոփոխությունը կամ ոչնչացումը:

81. Հաշվի օպերատորը կարող է արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցված տեղեկատվությունը հասանելի դարձնել երրորդ անձանց միայն օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով: Հաշվի օպերատորի ղեկավարներն ու աշխատակիցները պարտավոր են հաշվի օպերատորի մոտ աշխատելու ընթացքում և դրանից հետո պահպանել արժեթղթերի հաշվառման համակարգում գրանցված տեղեկատվության գաղտնիությունը:

82. Հաշվի օպերատորը պարտավոր է ապահովել, որ հանձնարարականները, տեղեկատվությունը, հարցումները Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցվեն հաշվի օպերատորի իրավասու ներկայացուցչի կողմից: Հաշվի օպերատորը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված պահանջի խախտման հետևանքով անձանց պատճառած վնասների համար:

ԳԼՈՒԽ 26. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

83. Հաշվի օպերատոր կարող են լինել միայն արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամները:

84. Կենտրոնական դեպոզիտարիան հաշվի օպերատորի կարգավիճակը շնորհում է միայն սույն կանոնակարգի 83-րդ կետով նախատեսված այն անձանց, որոնք բավարարում են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված պահանջները:

85. Հաշվի օպերատորի կարգավիճակի ստացման համար Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացվող դիմումի ձևը, դրան կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և ներկայացման կարգը, ինչպես նաև դրանց բովանդակության նկատմամբ պահանջները սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

86. Կենտրոնական դեպոզիտարիան կարող է մերժել հաշվի օպերատորի կարգավիճակի շնորհումը, եթե անձը չի բավարարում հաշվի օպերատորի համար սահմանված պահանջները: Հաշվի օպերատորի կարգավիճակի շնորհումը մերժելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկացնում է հաշվի օպերատորի կարգավիճակ ստանալու դիմումը ներկայացրած անձին՝ նշելով մերժման պատճառները:

ԳԼՈՒԽ 27. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

87. Հաշվի օպերատորը պարտավոր է ստացված հանձնարարականները փոխանցել Կենտրոնական դեպոզիտարիային դրանք ստանալուց անմիջապես հետո, եթե հանձնարարականը տված անձը չի նշել այլ ժամկետ այն պայմանագրում, որի համաձայն հաշվի օպերատորին լիազորվել է Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցել տրված հանձնարարականը:

88. Եթե արժեթղթերի հաշվառման համակարգում գրառումների կատարման համար օրենքով, սույն կանոնակարգով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված բոլոր պահանջները բավարարված են, Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է անմիջապես իրականացնել հաշվի օպերատորից ստացված հանձնարարականն իր կանոններին համապատասխան, եթե այլ ժամկետ նախատեսված չէ հանձնարարականով:

89. Եթե հաշվի օպերատորի կողմից փոխանցված հանձնարարականը սահմանում է ֆինանսական պարտավորությունների վերջնահաշվարկը՝ որպես արժեթղթերի փոխանցման նախապայման, Կենտրոնական դեպոզիտարիան փոխանցում է արժեթղթերը համապատասխան հանձնարարականը փոխանցած հաշվի օպերատորների միջև ֆինանսական պահանջների և պարտավորությունների վերջնահաշվարկից հետո: Մինչև արժեթղթերի փոխանցումը Կենտրոնական դեպոզիտարիան սառեցնում է փոխանցման ենթակա արժեթղթերը:

90. Հաշվի օպերատորն իրավունք ունի իրականացնելու միայն այն անձանց կողմից տրված հանձնարարականները և հարցումները, ովքեր սույն կանոնակարգի համաձայն հանդիսանում են արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնություն իրականացնելու լիազորություն ունեցող անձ:

91. Հաշվի օպերատորը, որն անձից ստանում է գործառնություններ կատարելու հանձնարարական կամ արժեթղթերի հաշվառման համակարգում պարունակվող տեղեկատվության վերաբերյալ հարցում, պարտավոր է նույնականացնել անձին և ստուգել անձի՝ համապատասխան արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերով գործառնություններ իրականացնելու հանձնարարական կամ հարցում տալու լիազորությունը: Արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնություն իրականացնելու հանձնարարականը կամ հարցումը կարող է տրվել ուղղակիորեն հաշվետիրոջ կողմից կամ նրա կողմից օրենքին համապատասխան (այդ թվում՝ լիազորագրի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի հետ կնքված պայմանագրի հիման վրա) լիազորված անձի կողմից: Ընդ որում, արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնություն իրականացնելու հանձնարարական կամ հարցում տալու լիազորագիրը պետք է հաստատվի նոտարական կարգով:

92. Հաշվի օպերատորը պատասխանատու չէ արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնություն իրականացնելու լիազորության օրինականության ստուգման համար:

93. Եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ սույն կանոնակարգով, ապա հաշվի օպերատորն իրավունք չունի Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցելու արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնություն իրականացնելու հանձնարարականը՝ առանց հաշվետիրոջ կամ նրա լիազորված անձի կողմից ներկայացված համապատասխան հանձնարարականի:

94. Հաշվի օպերատորը պարտավոր է ստուգել իր կողմից Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցվող տեղեկատվության ճշտությունը: Հաշվի օպերատորը պատասխանատվություն է կրում գործառնություններ կատարելու համար իր կողմից Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցված հանձնարարականների ճշտության համար:

95. Հաշվի օպերատորը պարտավոր է պահպանել գործառնություններ կատարելու համար իրեն տրված հանձնարարականների համար հիմք հանդիսացած բոլոր փաստաթղթերը, հանձնարարականները և հարցումները, դրանք ստանալուց հետո 10 տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 28. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ

96. Հաշվի օպերատորի կողմից օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրով սահմանված պահանջները խախտվելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի մասնակիորեն կամ ամբողջովին կասեցնելու հաշվի օպերատորի կարգավիճակը, եթե դա անհրաժեշտ է հաշվետերերի իրավունքների պաշտպանության համար:

97. Հաշվի օպերատորի կարգավիճակի կասեցման ժամանակահատվածում մասնակիորեն կամ ամբողջովին սահմանափակվում է հաշվի օպերատորի՝ հանձնարարականներ և (կամ) հարցումներ ընդունելու և (կամ) կատարելու իրավունքը:

98. Հաշվի օպերատորի կարգավիճակի կասեցման մասին Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի որոշումը պետք է սահմանի.

1) հաշվի օպերատորի կարգավիճակի կասեցման հիմքերը,
2) հաշվի օպերատորի կարգավիճակի կասեցման ծավալը՝ մասնակի կամ ամբողջությամբ,
3) մասնակի կասեցման դեպքում՝ սահմանափակումների նկարագրությունը,
4) հաշվի օպերատորի կարգավիճակի կասեցման հիմքերի վերացման ժամկետը:

99. Հաշվի օպերատորի կարգավիճակի կասեցման մասին Կենտրոնական դեպոզիտարիայի որոշումն անմիջապես հրապարակվում է, ինչպես նաև տրամադրվում է հաշվի օպերատորին՝ այն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 29. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԿԱՆՉՈՒՄԸ

100. Եթե հաշվի օպերատորն էապես խախտում է օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրով սահմանված պահանջները, Կենտրոնական դեպոզիտարիան հետ է կանչում տվյալ անձի՝ հաշվի օպերատորի կարգավիճակը:

101. Հաշվի օպերատորի կարգավիճակը հետկանչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան կազմակերպում է արժեթղթերի հաշիվները կառավարելու իրավունքի և ռեեստրի վարման փոխանցումը այլ հաշվի օպերատորներին:

102. Հաշվի օպերատորի կարգավիճակի հետկանչման մասին Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի որոշումը պետք է սահմանի.

1) հաշվի օպերատորի կարգավիճակի հետկանչման հիմքերը,
2) սույն կանոնակարգի 101-րդ կետով նախատեսված՝ արժեթղթերի հաշիվների կառավարման և ռեեստրի վարման փոխանցման ժամկետը,
3) սույն կանոնակարգի 101-րդ կետով նախատեսված՝ արժեթղթերի հաշիվների կառավարման և ռեեստրի վարման փոխանցումը կազմակերպելու համար անհրաժեշտ այլ պայմաններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետերերը և թողարկողները պետք է հնարավորություն ունենան նոր հաշվի օպերատորների հետ կնքելու համապատասխան պայմանագրեր:

103. Հաշվի օպերատորի կարգավիճակը հետկանչելու դեպքում տվյալ հաշվի օպերատորը պարտավոր է փոխհատուցել իր միջոցով արժեթղթերի հաշիվներն օգտագործող բոլոր հաշվետերերի ուղղակի ծախսերը, որոնք կապված են արժեթղթերի հաշիվների փակման, նոր արժեթղթերի հաշիվների բացման և փակված հաշիվներից նոր բացված հաշիվներին արժեթղթերի փոխանցման հետ (այդ գործառնությունների համար վճարներ նախատեսված լինելու դեպքում):

104. Հաշվի օպերատորի կարգավիճակի հետկանչման մասին Կենտրոնական դեպոզիտարիայի որոշումն անմիջապես հրապարակվում է, ինչպես նաև տրամադրվում է հաշվի օպերատորին այն ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 30. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

105. Հաշվի օպերատորն իրավունք ունի հրաժարվելու հաշվի օպերատորի կարգավիճակից՝ լուծելով Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագիրը, եթե հաշվի օպերատորն այդ մասին գրավոր տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային առնվազն 2 ամիս առաջ: Մինչև հաշվի օպերատորի կարգավիճակի դադարումը, հաշվի օպերատորը կրում է այդ կարգավիճակից բխող բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

106. Հաշվի օպերատորը, որը ցանկանում է հրաժարվել հաշվի օպերատորի կարգավիճակից, պարտավոր է այդ մասին գրավոր ձևով տեղեկացնել իր միջոցով արժեթղթերի հաշիվներ բացած, ինչպես նաև ռեեստր վարող բոլոր անձանց:

107. Սույն կանոնակարգի 106-րդ կետով նախատեսված տեղեկացումն ուղարկվում է պատվիրված նամակով, ոչ ուշ, քան Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրի լուծմանը նախորդող 30-րդ օրը:

108. Հաշվի օպերատորի կարգավիճակից հրաժարվելու դեպքում տվյալ հաշվի օպերատորը պարտավոր է փոխհատուցել իր միջոցով արժեթղթերի հաշիվներն օգտագործող բոլոր հաշվետերերի ուղղակի ծախսերը, որոնք կապված են արժեթղթերի հաշիվների փակման, նոր արժեթղթերի հաշիվների բացման և փակված հաշիվներից նոր բացված հաշիվներին արժեթղթերի փոխանցման հետ (այդ գործառնությունների համար վճարներ նախատեսված լինելու դեպքում):

109. Սույն կանոնակարգի 106-րդ կետով նախատեսված տեղեկացումը, բացի հաշվի օպերատորի կարգավիճակի դադարման ամսաթվից, պետք է պարունակի նաև այլ հաշվի օպերատորների տվյալները, ինչպես նաև սույն կանոնակարգի 108-րդ կետի համաձայն ծախսերի փոխհատուցում ստանալու իրավունքի մասին նշում:

ԳԼՈՒԽ 31. ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԴԱԴԱՐԵՑՐԱԾ ԱՆՁԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

110. Անձը, որի հաշվի օպերատորի կարգավիճակը դադարել է սույն կանոնակարգի 29-րդ կամ 30-րդ գլուխների համաձայն, պարտավոր է կատարել Կենտրոնական դեպոզիտարիայի հանձնարարականները և բավարարել բոլոր այն պահանջները, որոնք ուղղված են հաշվետերերի իրավունքների պաշտպանությանը, արժեթղթերի հաշիվների և ռեեստրի վարման գործընթացի շարունակականության ապահովմանը:

111. Հաշվի օպերատորի կարգավիճակը դադարեցրած անձը պարտավոր է արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների կատարման համար հիմք հանդիսացած բոլոր փաստաթղթերի և տեղեկությունների արխիվացման գործընթացը կազմակերպել այնպես, որ ապահովվեն այդ տեղեկատվության և փաստաթղթերի պահպանումը և դրանց հասանելիությունը իրավասու անձանց և պետական լիազոր մարմինների համար՝ հաշվի օպերատորի կարգավիճակի դադարման օրվան հաջորդող առնվազն 10 տարվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 6-ի թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 193-րդ, 194-րդ հոդվածները, 222-րդ հոդվածի 23-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 6-ի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 33) 36-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36. Այն պահառուն, որը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանդիսանում է նաև ներդրումային ֆոնդի պահառու, կարող է մատուցել տվյալ ներդրումային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) սեփականատերերի ռեեստրի վարման ծառայություններ տվյալ ներդրումային ֆոնդի (ֆոնդի կառավարչի) հետ կնքված պայմանագրին համապատասխան, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:»:

2. Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 33-ի 37-41-րդ կետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 3 ամսվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան և ներդրումային ծառայություններ մատուցող անձինք պարտավոր են համապատասխանեցնել իրենց գործունեությունը սույն որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հոկտեմբերի 2012 թ., N 273-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հոկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2012 թ. (ՀՀՊՏ N29 (442), 3.12.2012):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 176-րդ հոդվածը, 222-րդ հոդվածի 23-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 713-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 31-րդ և 32-րդ բաժինները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հոկտեմբերի 2012 թ., N 274-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հոկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2012 թ. (ՀՀՊՏ N29 (442), 3.12.2012):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ի 31-րդ կետում «ածանցյալ արժեթղթերում» բառերը փոխարինել «ածանցյալ գործիքներում, գրավադրված, ռեպո համաձայնագրերով վաճառված ակտիվներում և այն ակտիվներում, որոնց վրա կա դրանց տնօրինումը սահմանափակող որևէ պայման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող յոթերորդ ամսվա մեկին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հոկտեմբերի 2012 թ., N 275-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հոկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2012 թ. (ՀՀՊՏ N29 (442), 3.12.2012):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման և կազմակերպության տարեդարձեր» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2012 թվականի դեկտեմբերի 17-ից շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման և կազմակերպության տարեդարձեր» հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը հուշադրամի էսքիզների հետ ներկայացված է սույն որոշման Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
2 նոյեմբերի 2012 թ., N 280-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 280-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման և կազմակերպության տարեդարձեր» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման և կազմակերպության տարեդարձեր» հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը և անդամ երկրների դրոշները, որոնց մեջտեղում Արարատ լեռան ոճավորված պատկերն է և թողարկման տարեթիվը՝ «2012»: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ»: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով մակագրված են «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված են ճյուղավորված ծառ և ՀԱՊԿ-ի տարբերանշանը: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով մակագրված են «ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿ» և «ՍՏՈՐԱԳՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿ»:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2012 թ. (ՀՀԳՏ N29(442), 3.12.2012):

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ՝ տամպոտպագրությամբ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	200 հատ

1.1. «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ստորագրման և կազմակերպության տարեդարձեր» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված 7,77, 15,55 և 31,1 գրամ քաշերով «Նոյյան տապան» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2012 թվականի դեկտեմբերի 25-ից շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2012-2013 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված 7,77, 15,55 և 31,1 գրամ քաշերով «Նոյյան տապան» հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք հուշադրամների էսքիզների հետ ներկայացված են սույն որոշման Հավելվածում (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
2 նոյեմբերի 2012 թ., N 281-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 281-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 7,77 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է 100 դրամ անվանական արժեքով և 7,77 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի հատվածում հուշադրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2012»: Աջ կողմում տեղադրված են 1/4 OZ և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Նոյյան տապանը, սպիտակ աղավնին՝ ձիթենու ճյուղը կտցին, և Արարատ լեռը՝ արևածագի ֆոնին: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.11.2012 թ. (ՀՀԳՏ N29(442), 3.12.2012):

Հուշադրամների բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	7,77 գ
Տրամագիծը	20,18 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր-ընդհատվող, համարակալված
Տպաքանակը	2000 հատ

1.1. 7,77 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. 15,55 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է 200 դրամ անվանական արժեքով և 15,55 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի հատվածում հուշադրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2012»: Աջ կողմում տեղադրված են 1/2 OZ և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Նոյյան տապանը, սպիտակ աղավնին՝ ձիթենու ճյուղը կտցին, և Արարատ լեռը՝ արևածագի ֆոնին: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Հուշադրամների բնութագիրը.

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	15,55 գ
Տրամագիծը	27,66 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր-ընդհատվող, համարակալված
Տպաքանակը	2000 հատ

2.1. 15,55 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. 31,1 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է 500 դրամ անվանական արժեքով և 31,1 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի հատվածում հուշադրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2012»: Աջ կողմում տեղադրված են 1 OZ և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Նոյյան տապանը, սպիտակ աղավնին՝ ձիթենու ճյուղը կտցին, և Արարատ լեռը՝ արևածագի ֆոնին: Վերևի և ներքևի կիսաշրջագծերով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

Հուշադրամների բնութագիրը.

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	31,1 գ
Տրամագիծը	38,60 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր-ընդհատվող, համարակալված
Տպաքանակը	2000 հատ

3.1. 31,1 գրամ քաշով «Նոյյան տապան» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՆՈՅԵՄԲԵՐ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 11-ի նիստի «2012 թվականի դեկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի դեկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 31
Իրական հատվածի ցուցանիշներ 34
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 37
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանությունների)
ՀՀ վճարային հաշվեկշիռ (վերլուծական ներկայացում)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանությունների)
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրք
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների և պարտավորությունների արժութային կազմը
ՀՀ համախառն արտաքին պարտք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանությունների)
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 62
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 63
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 74
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 95
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 106
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 108
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 114
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (11.12.2012)

2012 թվականի դեկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Ստեփանյանը, Վ. Աբրահամյանը, Ա. Դարբինյանը, Օ. Աղասյանը

Խորհրդի նիստը սկսվեց նոյեմբերի վերջի դրությամբ իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները:

2012 թ. նոյեմբերին արձանագրվել է 1.4% գնաճ, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը կազմել է 3.6%՝ մոտենալով նպատակային ցուցանիշին: Շարունակվել է ամսական գնաճին պարենային ապրանքների գների աճի գերակշռող նպաստման միտումը՝ 2.4% (նպաստումը ընդհանուր գնաճին՝ շուրջ 1.3 տոկոսային կետ), որի կառուցվածքում զգալի աճ է դիտվել «Հացամթերք», «Մսամթերք», «Կենդանական և բուսական յուղեր» և «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերի գներում՝ համապատասխանաբար 10.7%, 3.5%, 3.4% և 1.7% (նպաստումը գնաճին՝ 1.1, 0.4, 0.1 և 0.1 տոկոսային կետ): Նոյեմբերին բնականոն գնաճը ցուցաբերել է հիմնականում կայուն վարքագիծ՝ գրանցելով ընդամենը 0.4% գնաճ, որի պարագայում 12-ամսյա ցուցանիշը պահպանվել է 3.5% մակարդակում:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2012 թվականի հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.2%՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի թողարկման ծավալների համապատասխանաբար 10.0% և 8.2% աճով: Շինարարության ճյուղի և ծառայությունների ոլորտի թողարկման ծավալների աճը կազմել է համապատասխանաբար 4.5% և 5.7%:

Արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներից 2012 թվականի հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ) ավելացել է 7.3%-ով, իսկ ներմուծումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՍԻՖ)՝ 2.1%-ով: Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է տ/տ 10.9%-ով (հոկտեմբերին աճը կազմել է տ/տ 25.2%):

2012 թվականի հոկտեմբերին պահպանվել են մասնավոր սպառման աճի բարձր տեմպերը, իսկ մասնավոր ներդրումների մասով, տարվա անցած ժամանակահատվածում դիտված նվազումից հետո, դրսևորվել են աճի միտումներ: Ըստ ԿԲ գնահատումների՝ տարին կավարտվի մասնավոր սպառման՝ 7.9% և մասնավոր ներդրումների 4.4% աճով: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա գնահատվում է զսպող՝ պայմանավորված պետական ծախսերի տնտեսմամբ:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: Նոյեմբերին ֆինանսական շուկայում պահպանվել են տոկոսադրույքների կայունացման միտումները. միջբանկային ռեպո միջին ամսական տոկոսադրույքը կազմել է 9.0%

(նախորդ ամսվա համեմատությամբ ընդամենը 0.15 տոկոսային կետով աճ), մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում միջին տոկոսադրույքը՝ 9.96% (աճը՝ 0.15 տոկոսային կետ), բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը՝ 7.91% (աճը՝ 0.15 տոկոսային կետ):

ՀՀ արտարժույթի շուկայում նոյեմբերին, նախորդ ամսվա միջինի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժեզրկվել է 0.12%-ով՝ կազմելով 407.1 դրամ, եվրոյի նկատմամբ արժևորվել է 0.98%-ով՝ կազմելով 522.3 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 0.69%-ով՝ կազմելով 12.98 դրամ:

Նոյեմբերին ԱՄՆ դոլարն արժևորվել է եվրոյի նկատմամբ շուրջ 1.2%-ով՝ մեկ եվրոյի դիմաց միջինը կազմելով 1.28 (տ/տ արժևորումը՝ 5.7%):

Նոյեմբերին ձևավորվել է դրամավարկային հետևյալ միջավայրը. փողի և դրամային զանգվածների 12-ամսյա աճը կազմել է համապատասխանաբար 21.2% և 16.3%, որոնց կառուցվածքում դրամային ավանդների աճը կազմել է տ/տ 25.2%, իսկ արտարժութային ավանդներինը՝ 27.7% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 20.5%): Նոյեմբերին վարկավորման աճի տեմպերը կազմել են տ/տ 26.1%՝ կառուցվածքում պահպանելով արտարժութային վարկերի գերակշռությունը:

2012 թ. նոյեմբերին, զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների պահպանվող անորոշությունների և համաշխարհային թույլ պահանջարկի պայմաններում, հիմնական հումքային ապրանքների շուկաներում առավելապես դրսևորվել են գնանկումային միտումներ, իսկ պարենային ապրանքների միջազգային շուկաներում միտումները հիմնականում կայունացել են: «Intercontinental Exchange» (ICE) բորսայում գնանշվող «Բրենթ» տեսակի հում նավթի մեկ բարելի միջին գինը նոյեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, նվազել է շուրջ 2.0%-ով (տ/տ նվազում՝ 0.7%): «Over The Counter» (OTC) միջազգային միջբանկային շուկայում դիտվել է ոսկու գնի 1.2% նվազում (տ/տ նվազում՝ 0.9%): Արդյունաբերական մետաղներից Լոնդոնի մետաղների բորսայում գնանշվող պղնձի գինը նոյեմբերին նվազել է 4.2%-ով (տ/տ աճ՝ 1.6%):

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից ս. թ. դեկտեմբերի 6-ին հրապարակված պարենի գների ինդեքսը 2012 նոյեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, նվազել է 1.5%-ով, որի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ինդեքսը նվազել է 2.6%-ով: ԱՄՆ Գյուղդեպարտամենտի կոշտ կարմրահատ ցորենի գնի ինդեքսի աճը դանդաղել է և նոյեմբերին կազմել ընդամենը 0.8% (տ/տ աճը՝ 28.5%): «Chicago Board of Trade» (CBOT) ապրանքահումքային բորսայում գնանշվող բրնձի գինը նոյեմբերին նվազել է 1.8%-ով (տ/տ 1.2% նվազում), իսկ «New York Board-Intercontinental Exchange» (NYB-ICE) բորսայում գնանշվող անմշակ շաքարավազի գնի ինդեքսը՝ 5.3%-ով (տ/տ 21.2% նվազում):

ԱՄՆ ԴՊՀ-ն, հիմք ընդունելով ԱՄՆ-ում սպասվող տնտեսության զարգացման չափավոր տեմպերը և միջնաժամկետում խարսխված գնաճային սպասումները, նոյեմբերին շարունակել է ցածր տոկոսադրույքի (0-0.25% միջակայքում) քաղաքականությունը:

Եվրոպական կենտրոնական բանկը նույնպես անփոփոխ է թողել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը: Ե՛Վ ԴՊՀ-ն, և՛ ԵԿԲ-ն շարունակում են տնտեսական վերականգնմանն ուղղված ոչ ավանդական դրամավարկային մեխանիզմների կիրառումը:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդն անդրադարձավ արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումներին, դրամավարկային քաղաքականության ուղղություններին:

Խորհուրդն արձանագրեց, որ նոյեմբերին դիտված մակրոտնտեսական զարգացումները հիմնականում ընթացել են Դրամավարկային քաղաքականության չորրորդ եռամսյակի ծրագրի բազային սցենարին համահունչ: Արտաքին հատվածում պահպանվում են զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների քաղաքական լուծումների վերաբերյալ անորոշությունները, որի պարագայում կանխատեսվող հորիզոնում ակնկալվում է համաշխարհային պահանջարկի ցածր մակարդակ, իսկ պարենային ապրանքների միջազգային շուկայում կշարունակի պահպանվել հիմնարար լարվածու-

թյունը: Այս պարագայում ներքին գների վրա արտաքին հատվածի ազդեցությունը կլինի թույլ գնաճային:

Խորհուրդը գնահատեց, որ հոկտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում պահպանվել են մասնավոր ծախսումների բարձր աճի տեմպերը: Միաժամանակ դիտվել է ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների բարձր աճ և հարկաբյուջետային քաղաքականության առավել զսպող ազդեցություն համախառն պահանջարկի վրա: Արդյունքում, ՀՀ տնտեսությունից ակնկալվող ազդեցությունը ներքին գների վրա թույլ գնաճային էր:

Հաշվի առնելով 12-ամսյա գնաճի ցուցաբերած փաստացի վարքագիծը և կանխատեսվող հորիզոնում արտաքին ու ՀՀ տնտեսությունների զարգացման հեռանկարում թույլ գնաճային միջավայրի պահպանումը՝ Խորհուրդը նպատակահարմար է գտնում դեկտեմբերին շարունակել ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների փոփոխությունից: Այդ պարագայում գնահատվում է, որ կանխատեսվող հորիզոնում 12-ամսյա գնաճը կշարունակի մոտենալ 4% նպատակային ցուցանիշին և կպահպանվի դրա շրջանակում:

2012 թվականի դեկտեմբերի 11-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները սահմանվում են համապատասխանաբար 9.5% և 6.5%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2012 թ. հոկտեմբեր*	*2012 թ. հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2011 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*	*2012 թ. նոյեմբեր*	*2012 թ. նոյեմբերի իրական աճի ինդեքսը 2011 թ. նոյեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	104.9	-	105.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	98881.6	98.0	107133.8	102.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	606.7	131.4	664.1	101.4
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	118220.3	101.4	60369.1	109.5
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	199351.2	104.9	206219.0	104.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	51847.8	102.1	65061.6	100.4
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	85700.7	109.2	81024.1	110.5
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	119672[1]	101.7	119791[2]	101.5

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	98.1[1]	99.5	101.5
Փետրվար	99.1	103.9[1]	101.2	98.3
Մարտ	100.1	103.4[1]	95.4	98.2
Ապրիլ	99.4	99.9[1]	100.2	98.5
Մայիս	98.7	98.3[1]	100.5	97.5
Հունիս	98.7	102.2	101.4	90.3
Հուլիս	98.5	98.0	99.7	77.5
Օգոստոս	99.6	100.6	101.5	81.2
Սեպտեմբեր	100.8	101.3	100.0	95.5
Հոկտեմբեր	101.2	102.7	100.2	98.6
Նոյեմբեր	101.4	100.9	99.5	100.0
2012 թ. հունվար – նոյեմբերը 2011 թ. հունվար – նոյեմբերի համեմատությամբ	102.5	106.8	97.3	95.4

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]	-0.9	2.6	3.0
Մարտ	0.8	0.8	0.1	2.7	2.2
Ապրիլ	1.3	-0.2	-0.6	2.1	1.9
Մայիս	1.0	0.0	-1.3	0.8	0.5
Հունիս	-0.8	-1.4	-1.3	-0.4	0.7
Հուլիս	-0.8	-3.0	-1.5	-1.9	2.3
Օգոստոս	1.3	-0.6	-0.4	-2.3	2.5
Սեպտեմբեր	-0.2	0.8	0.8	-1.5	2.5
Հոկտեմբեր	1.0	0.3	1.2	-0.3	3.4
Նոյեմբեր	1.6	1.2	1.4	1.1	3.6
Դեկտեմբեր	1.8	2.5			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՄԻՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012 թ. նոյեմբերը 2012 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**101.4**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**102.4**	**1.28**
Բանջարեղեն և կարտոֆիլ	121.7	1.36
Միրգ	106.9	0.25
Հացամթերք	100.6	0.06
Մսամթերք	100.6	0.06
Ձու	102.8	0.04
Կենդանական և բուսական յուղեր	101.2	0.04
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.5**	**0.08**
Դեղամիջոցներ	102.2	0.04
Հագուստ և գործվածք	101.3	0.04
Կոշկեղեն	101.1	0.02
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	99.0	-0.02
Ծառայություններ, որից՝	**100.1**	**0.03**
Բնակարանային, կոմունալ	100.1	0.02
Կենցաղային բնույթի	101.1	0.01
Հանրային սննդի	100.7	0.01
Տրանսպորտի	99.3	-0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	0.08
Մարտ	1.14	0.82	0.64[4]	0.04
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	0.02
Մայիս	0.41	0.04	0.32[4]	-0.16
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	0.35
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	0.14
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	-0.06
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	0.67
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	0.73
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	0.37
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	4.91
Մարտ	3.33	7.14	5.68[4]	4.27
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	3.81
Մայիս	3.37	5.92	5.75[4]	3.30
Հունիս	3.36	5.40	6.32[4]	3.26
Հուլիս	3.20	5.16	6.95[4]	3.19
Օգոստոս	3.52	4.96	7.01[4]	2.85
Սեպտեմբեր	3.71	4.86	7.01[4]	3.10
Հոկտեմբեր	4.16	5.53	6.09[4]	3.48
Նոյեմբեր	4.72	6.16	5.37	3.47
Դեկտեմբեր	5.25	6.26	5.29	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**3.47**
Հավի բուդ	0.34
Ալյուր բարձր տեսակի	0.25
Բենզին	0.21
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.20
Ծխախոտ «Գառնի»	0.18
Բրինձ	0.14
Պղպեղ (սև)	0.11
Եփած երշիկ	0.10
Աղացած սև սուրճ	0.10
Մակարոն	0.09
Բուսական յուղ (արևածաղկի)	0.09
Բաստուրմա	0.09
Պանիր «Չանախ»	-0.09
Պանիր տնական (կովի կաթից)	-0.10
Տավարի միս	-0.25

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

[3] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվանում	*2012 թ. հունվար - հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար - հոկտեմբերը 2011 թ. հունվար - հոկտեմբերի նկատմամբ (%)*	*2012 թ. հունվար - նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար - նոյեմբերը 2011 թ. հունվար - նոյեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1166.0	107.3	1292.2	106.7
Ներմուծում *(ՍԻՖ)*	3437.1	102.1	3838.5	102.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2271.1	99.7	2546.3	100.5

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-նոյեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1216372	165980	1050392	1364892	186441	1178451
ԱՄՆ	123247	122784	463	138384	145332	-6949
Ուկրաինա	24518	23126	1393	26790	25151	1640
Ղազախստան	20933	2136	18797	23407	2274	21133
Գերմանիա	23920	25144	-1224	25601	27604	-2003
Իսպանիա	9026	9391	-366	9891	10142	-252
Ֆրանսիա	16869	21776	-4907	18872	24773	-5901
ԱՄԷ	17869	52542	-34673	19141	57937	-38797
Չինաստան	3112	74431	-71318	3518	83256	-79738
Թուրքիա	5756	33063	-27306	6197	36078	-29881
Այլ երկրներ	282978	188249	94728	323341	224558	98783
Ընդամենը	**1744601**	**718622**	**1025979**	**1960033**	**823547**	**1136486**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Նոյեմբեր			Հունվար-նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	154499	20215	134284	1479502	227882	1251620
ԱՄՆ	9302	9671	-369	113753	100099	13654
Ուկրաինա	1877	2034	-158	18965	18963	2
Ղազախստան	2828	156	2672	23832	1549	22283
Գերմանիա	2229	2319	-90	24745	30637	-5892
Իսպանիա	480	1304	-825	6897	10440	-3542
Ֆրանսիա	2149	1562	588	17859	23692	-5833
ԱՄԷ	1865	5160	-3295	21815	48371	-26556
Չինաստան	350	7765	-7415	5359	74265	-68906
Թուրքիա	303	3062	-2759	2983	27729	-24746
Այլ երկրներ	33362	18551	14810	301149	218956	82193
Ընդամենը	**209243**	**71799**	**137444**	**2016859**	**782581**	**1234278**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-նոյեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1155191	126510	1028682	1295163	141352	1153811
ԱՄՆ	65198	24675	40523	74380	27331	47049
Ուկրաինա	22987	14779	8207	25076	16202	8874
Ղազախստան	18525	1650	16875	20611	1769	18842
Գերմանիա	9540	6346	3194	10695	6905	3790
Իսպանիա	6972	2803	4170	7674	3052	4622
Ֆրանսիա	9473	7177	2296	10874	7668	3206
ԱՄԷ	3013	6922	-3910	3387	7660	-4273
Չինաստան	446	7910	-7464	529	8748	-8219
Թուրքիա	2036	4424	-2388	2136	4981	-2845
Այլ երկրներ	87189	35225	51963	96434	38934	57499
Ընդամենը	**1380569**	**238421**	**1142148**	**1546959**	**264602**	**1282357**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Նոյեմբեր			Հունվար-նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	140018	17241	122777	1312333	148241	1164092
ԱՄՆ	4932	2460	2472	60227	22875	37352
Ուկրաինա	1718	1541	177	17448	13691	3757
Ղազախստան	2491	156	2335	20139	1430	18709
Գերմանիա	966	720	246	10467	7350	3117
Իսպանիա	478	361	117	5697	3578	2119
Ֆրանսիա	1327	652	675	10645	4851	5794
ԱՄԷ	412	1077	-665	7165	6610	556
Չինաստան	134	657	-523	2891	9601	-6710
Թուրքիա	119	458	-339	1505	3758	-2252
Այլ երկրներ	11113	4722	6391	82685	40797	41888
Ընդամենը	**163708**	**30044**	**133664**	**1531202**	**262781**	**1268421**





ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔՆ ԸՍՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011					2012		
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.	III եռ.
Դրամական փոխանցումներ	**260.2**	**384.1**	**505.0**	**611.1**	**1760.3**	**294.8**	**412.8**	**542.4**
Աշխատողների զուտ աշխատավարձ (առանց եկամտահարկի, տրանսպորտային և ճանապարհորդությունների ծախսերի)	99.6	197.9	286.9	336.6	921.0	111.5	210.5	301.5
Աշխատողների աշխատավարձ [1]	128.2	254.8	369.4	433.5	1186.0	143.6	271.1	388.2
Ընթացիկ տրանսֆերտներ	151.7	174.0	202.2	261.7	789.6	169.7	185.0	211.7
Կապիտալ տրանսֆերտներ	8.9	12.2	15.9	12.8	49.8	13.6	17.2	29.1

[1] Չի ներառում վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձները:

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2011	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.6	125.1	128.0	127.3	126.6	131.4
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.7	211.9	216.5	217.3	221.7	220.9	217.7	221.4
2012	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	135.8	131.0	129.6	124.4	126.3	122.4	121.7	120.4	118.9	120.3	122.2	
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	221.0	216.3	215.7	214.3	215.3	211.9	214.1	213.4	210.7	210.3	211.6	

[1] Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով: Հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը:

[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌ (ՍՏԱՆԴԱՐՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԸՍՏ «ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ» 5-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ)[1,2]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011					2012		
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.	III եռ.
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	**-408.9**	**-334.6**	**-176.1**	**-188.6**	**-1108.2**	**-376.8**	**-344.1**	**-117.5**
Ապրանքներ	**-463.1**	**-499.7**	**-522.7**	**-592.2**	**-2077.6**	**-440.6**	**-531.3**	**-461.0**
Կրեդիտ	307.4	401.4	439.4	431.8	1580.0	396.7	397.6	412.7
Դեբետ	-770.5	-901.1	-962.1	-1024.0	-3657.7	-837.3	-928.9	-873.6
Ապրանքների առևտրի հաշվեկշիռ	**-461.6**	**-503.0**	**-526.1**	**-596.3**	**-2087.0**	**-443.3**	**-532.5**	**-463.3**
Արտահանում (ՖՕԲ)	297.9	386.5	420.9	415.0	1520.3	384.4	383.7	393.8
Ապրանքների արտահանում ըստ առևտրի վիճակագրության	262.4	340.7	370.2	361.0	1334.3	347.6	336.9	347.5
Հավաքագրված տվյալների ճշգրտում	35.5	45.7	50.7	54.0	186.0	36.9	46.8	46.3
Ներմուծում (ՖՕԲ)	-759.5	-889.4	-947.1	-1011.3	-3607.3	-827.8	-916.3	-857.2
Ապրանքների ներմուծում ըստ առևտրի վիճակագրության (ՍԻՖ)	-869.6	-1021.5	-1083.5	-1170.7	-4145.3	-956.1	-1061.6	-991.9
Հավաքագրված տվյալների ճշգրտում	110.1	132.1	136.4	159.4	538.0	128.3	145.4	134.7
Ապրանքներ վերամշակման համար	1.8	2.1	3.1	3.0	10.0	2.7	0.8	2.0
Կրեդիտ	1.8	2.2	3.1	3.2	10.3	2.7	1.4	2.6
Դեբետ	-	-0.1	-	-0.2	-0.3	-	-0.6	-0.5
Ապրանքներ ձեռք բերված տրանսպորտային կայաններում	-3.3	1.1	0.4	1.1	-0.7	0.8	0.4	2.1
Կրեդիտ	7.7	12.7	15.3	13.6	49.4	9.5	12.5	16.3
Դեբետ	-11.1	-11.6	-15.0	-12.4	-50.1	-8.7	-12.1	-14.2
Ծառայություններ	**-65.5**	**-79.3**	**-76.7**	**-90.6**	**-312.1**	**-68.5**	**-79.7**	**-65.6**
Կրեդիտ	148.4	186.6	269.6	222.3	826.9	153.6	187.2	260.7
Դեբետ	-213.9	-265.9	-346.3	-312.9	-1139.0	-222.1	-266.9	-326.3
Տրանսպորտ	-66.0	-66.8	-64.4	-87.1	-284.3	-67.9	-69.9	-65.3
Կրեդիտ	33.9	45.8	52.5	46.9	179.0	39.6	44.2	48.2
Դեբետ	-99.9	-112.5	-116.9	-133.9	-463.3	-107.4	-114.1	-113.4
որից՝ մարդատար	-7.0	-7.6	-5.1	-9.1	-28.7	-9.0	-6.5	-7.4
Կրեդիտ	6.7	10.3	13.6	9.5	40.2	6.1	9.2	12.2
Դեբետ	-13.7	-17.9	-18.8	-18.6	-68.9	-15.1	-15.7	-19.6
բեռնատար	-52.1	-53.2	-52.0	-68.3	-225.6	-54.3	-58.3	-49.7
Կրեդիտ	23.3	30.5	33.4	32.4	119.7	29.3	30.4	31.3
Դեբետ	-75.4	-83.7	-85.5	-100.7	-345.3	-83.6	-88.6	-81.0
այլ	-7.0	-6.0	-7.3	-9.7	-30.0	-4.6	-5.1	-8.2
Կրեդիտ	3.9	4.9	5.4	4.9	19.2	4.1	4.7	4.6
Դեբետ	-10.9	-10.9	-12.7	-14.6	-49.1	-8.7	-9.8	-12.8
ծովային	-12.2	-14.3	-15.2	-16.4	-58.0	-13.4	-14.9	-13.9
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	-12.2	-14.3	-15.2	-16.4	-58.0	-13.4	-14.9	-13.9
օդային	-14.2	-13.9	-12.7	-20.1	-60.8	-13.2	-10.9	-14.5
Կրեդիտ	8.8	13.1	16.3	12.0	50.1	8.3	12.3	14.6
Դեբետ	-23.0	-27.0	-29.0	-32.0	-110.9	-21.4	-23.2	-29.2
այլ տրանսպորտ	-39.7	-38.6	-36.5	-50.6	-165.5	-41.3	-44.1	-36.8
Կրեդիտ	25.1	32.7	36.2	34.9	128.9	31.3	31.9	33.5
Դեբետ	-64.8	-71.3	-72.8	-85.5	-294.4	-72.6	-76.0	-70.4
Ճանապարհորդություն	-5.8	-18.2	-5.1	-2.5	-31.7	-6.5	-16.2	-8.7
Կրեդիտ	68.8	91.1	163.7	122.0	445.6	69.6	94.8	162.6
Դեբետ	-74.6	-109.4	-168.8	-124.6	-477.3	-76.1	-111.0	-171.3
գործնական	6.5	4.3	5.9	-9.4	7.3	7.0	2.6	2.2
Կրեդիտ	28.5	37.7	51.5	43.5	161.1	28.8	39.1	50.9
Դեբետ	-21.9	-33.4	-45.5	-52.9	-153.8	-21.8	-36.6	-48.7
անձնական	-12.4	-22.6	-11.0	6.9	-39.0	-13.5	-18.8	-10.9
Կրեդիտ	40.3	53.4	112.2	78.5	284.5	40.8	55.6	111.7
Դեբետ	-52.7	-76.0	-123.2	-71.6	-323.5	-54.2	-74.4	-122.6
Կապի ծառայություններ	10.2	7.7	7.8	5.6	31.3	4.1	2.5	3.6
Կրեդիտ	13.0	10.8	12.8	9.7	46.3	7.4	8.4	8.2
Դեբետ	-2.8	-3.0	-5.0	-4.1	-15.0	-3.3	-5.9	-4.6
Շինարարական ծառայություններ	0.7	1.6	1.8	1.5	5.6	0.6	1.6	1.5
Կրեդիտ	1.6	2.1	2.5	2.1	8.3	1.5	2.1	2.2
Դեբետ	-0.9	-0.5	-0.7	-0.6	-2.7	-0.9	-0.5	-0.7

1	2	3	4	5	6	7	8	9
Ապահովագրական ծառայություններ	-8.9	-8.3	-8.4	-10.8	-36.4	-7.6	-9.7	-7.9
Կրեդիտ	3.5	5.5	5.0	4.8	18.7	4.5	4.5	4.6
Դեբետ	-12.3	-13.8	-13.4	-15.7	-55.1	-12.2	-14.2	-12.5
Ֆինանսական (առանց ապահովագրության)	-0.8	-1.0	-0.8	-0.4	-3.1	-1.4	-1.7	-1.6
Կրեդիտ	1.6	1.8	1.8	2.9	8.0	0.9	0.7	1.1
Դեբետ	-2.4	-2.8	-2.6	-3.3	-11.1	-2.4	-2.4	-2.7
Համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	11.3	12.3	13.0	14.8	51.5	14.1	14.8	14.6
Կրեդիտ	11.5	13.4	14.1	16.7	55.7	14.7	15.8	15.7
Դեբետ	-0.2	-1.1	-1.1	-1.8	-4.2	-0.6	-1.1	-1.1
Այլ գործնական ծառայություններ	-7.1	-10.1	-22.2	-14.3	-53.7	-4.8	-5.5	-5.2
Կրեդիտ	5.1	5.1	5.4	5.5	21.1	5.5	5.1	5.4
Դեբետ	-12.2	-15.1	-27.6	-19.8	-74.8	-10.3	-10.6	-10.5
Մասնավոր, մշակույթի և հանգստի ծառայություններ	0.4	3.2	2.2	2.9	8.8	0.4	3.3	3.1
Կրեդիտ	3.3	4.7	5.3	6.0	19.3	3.3	4.6	5.1
Դեբետ	-2.9	-1.4	-3.1	-3.0	-10.5	-2.8	-1.4	-2.0
Պետական ծառայություններ այլ կատեգորիաներին չվերաբ.	0.6	0.1	-0.6	-0.4	-0.2	0.4	1.1	0.2
Կրեդիտ	6.2	6.4	6.5	5.8	24.9	6.6	6.9	7.6
Դեբետ	-5.6	-6.3	-7.1	-6.1	-25.1	-6.1	-5.8	-7.4
Եկամուտներ	**-8.8**	**99.5**	**226.4**	**241.4**	**558.5**	**-11.5**	**120.2**	**239.0**
Կրեդիտ	147.1	273.4	388.3	453.0	1261.8	162.1	288.8	404.0
Դեբետ	-155.9	-173.9	-161.9	-211.6	-703.3	-173.7	-168.6	-165.0
Աշխատողների աշխատավարձ՝ ներառյալ սահմանային, սեզոնային և այլ աշխատողների	99.7	223.6	338.0	390.9	1052.2	111.9	238.2	355.4
Կրեդիտ	132.9	259.5	374.1	438.2	1204.9	148.3	275.8	393.0
Դեբետ	-33.3	-35.9	-36.1	-47.4	-152.7	-36.4	-37.6	-37.6
Եկամուտներ ներդրումներից	-108.5	-124.1	-111.7	-149.5	-493.7	-123.4	-118.0	-116.3
Կրեդիտ	14.2	13.9	14.1	14.8	57.0	13.8	13.0	11.1
Դեբետ	-122.7	-137.9	-125.8	-164.2	-550.6	-137.3	-131.0	-127.4
Ուղղակի ներդրումներից	-83.8	-93.9	-80.4	-116.2	-374.3	-91.6	-81.5	-76.1
Կրեդիտ	-0.1	0.1	0.3	0.2	0.5	-	-	-
Դեբետ	-83.8	-93.9	-80.7	-116.4	-374.8	-91.6	-81.5	-76.1
Պորտֆելային ներդրումներից	6.5	5.5	5.8	6.2	24.0	5.6	4.9	3.2
Կրեդիտ	7.1	6.5	6.7	7.0	27.3	5.9	5.4	3.5
Դեբետ	-0.6	-1.1	-0.9	-0.7	-3.3	-0.3	-0.5	-0.3
Այլ ներդրումներից	-31.2	-35.7	-37.0	-39.5	-143.4	-37.4	-41.4	-43.4
Կրեդիտ	7.1	7.2	7.1	7.6	29.1	8.0	7.6	7.6
Դեբետ	-38.3	-42.9	-44.2	-47.1	-172.5	-45.4	-49.0	-51.0
Ընթացիկ տրանսֆերտներ	**128.6**	**144.8**	**196.9**	**252.7**	**723.1**	**144.0**	**146.8**	**170.1**
Կրեդիտ	174.2	202.3	264.5	328.9	969.9	192.3	207.4	239.8
Դեբետ	-45.6	-57.5	-67.6	-76.3	-246.9	-48.3	-60.6	-69.7
Պետական կառավարում	18.4	23.8	58.1	60.0	160.3	16.0	17.6	23.3
Կրեդիտ	19.5	24.9	59.1	61.0	164.5	17.0	18.5	24.4
Դեբետ	-1.1	-1.1	-1.1	-1.0	-4.2	-1.0	-0.9	-1.1
Այլ (մասնավոր)	110.2	121.0	138.9	192.6	562.7	127.9	129.2	146.8
Կրեդիտ	154.7	177.4	205.4	267.9	805.5	175.2	188.9	215.4
Դեբետ	-44.5	-56.4	-66.5	-75.3	-242.7	-47.3	-59.7	-68.7
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ	**382.0**	**325.9**	**208.1**	**221.6**	**1137.5**	**325.5**	**294.8**	**56.9**
Կապիտալի հաշիվ	**26.3**	**24.4**	**24.1**	**21.4**	**96.2**	**27.0**	**16.2**	**30.8**
Կրեդիտ	28.1	31.4	31.5	28.7	119.8	32.0	24.6	38.4
Դեբետ	-1.9	-7.0	-7.4	-7.3	-23.6	-5.0	-8.5	-7.6
Կապիտալ տրանսֆերտներ	26.3	24.4	24.1	21.4	96.2	27.0	16.2	30.8
Կրեդիտ	28.1	31.4	31.5	28.7	119.8	32.0	24.6	38.4
Դեբետ	-1.9	-7.0	-7.4	-7.3	-23.6	-5.0	-8.5	-7.6
Պետական կառավարում	18.0	17.9	13.3	14.3	63.5	15.3	2.8	4.7
Կրեդիտ	18.0	17.9	13.3	14.3	63.5	15.3	2.8	4.7
Դեբետ	-	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	8.3	6.6	10.8	7.1	32.7	11.8	13.3	26.1
Կրեդիտ	10.1	13.5	18.2	14.4	56.3	16.7	21.8	33.7
Դեբետ	-1.9	-7.0	-7.4	-7.3	-23.6	-5.0	-8.5	-7.6
Չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում/վաճառք	-	-	-	-	-	-	-	-
Ֆինանսական հաշիվ	**355.7**	**301.5**	**184.0**	**200.1**	**1041.3**	**298.5**	**278.6**	**26.1**
Ուղղակի ներդրումներ	156.1	120.4	133.1	37.8	447.5	101.7	74.2	132.5
Արտերկրներում	-2.0	-7.4	-7.0	-61.6	-78.0	-5.2	-6.4	-5.8
Բաժնետիրական կապիտալում	-2.0	-7.4	-6.7	-61.4	-77.5	-5.2	-6.4	-5.8

1	2	3	4	5	6	7	8	9
Վերաներդրված եկամուտներ	0.1	-0.1	-0.3	-0.2	-0.5	-	-	-
Այլ կապիտալ	-	-	-	-	-	-	-	-
Հաշվետու երկրում	158.0	127.8	140.2	99.4	525.5	106.9	80.6	138.3
Բաժնետիրական կապիտալում	44.2	52.8	41.2	20.7	159.0	9.7	11.5	54.3
Վերաներդրված եկամուտներ	78.6	49.7	68.5	40.4	237.2	77.5	63.5	57.8
Այլ կապիտալ	35.2	25.3	30.4	38.4	129.3	19.7	5.7	26.2
Պորտֆելային ներդրումներ	-10.5	-4.4	1.3	3.3	-10.4	-	-1.1	0.2
Ակտիվներ	0.2	-2.7	0.5	2.4	0.4	-0.1	-0.2	-0.2
Կապիտալի մասնակցություն	0.4	-0.3	0.7	-0.1	0.7	0.1	-	-
Պարտքի արժեթղթեր	-0.2	-2.4	-0.2	2.5	-0.3	-0.2	-0.2	-0.2
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-0.2	-0.8	-0.1	0.2	-0.8	-0.2	-0.2	-0.2
Դրամի շուկայի գործիքներ	-	-1.7	-0.1	2.2	0.5	-	-	-
Պարտավորություններ	-10.7	-1.7	0.8	0.9	-10.8	0.1	-1.0	0.4
Կապիտալի մասնակցություն	-	-0.3	0.5	-	0.2	-	0.1	-
Պարտքի արժեթղթեր	-10.7	-1.4	0.3	0.9	-11.0	0.1	-1.0	0.3
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-10.2	-0.8	0.3	0.7	-10.1	0.3	-0.9	0.3
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	0.4	0.4	-	-	-
Բանկեր	-10.3	-0.8	0.3	0.3	-10.5	0.3	-0.8	0.3
Այլ հատվածներ	-	-	-	-	-	-	-	-
Դրամի շուկայի գործիքներ	-0.5	-0.6	-	0.2	-0.9	-0.2	-0.2	-
Դրամավարկային կարգավորման մարմիններ					-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	-0.5	-0.6	-	0.2	-0.9	-0.2	-0.2	-
Բանկեր	-	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ					-	-	-	-
Ֆինանսական ածանցյալներ (զուտ)	-	-	-	-	-	-		
Այլ ներդրումներ	133.4	129.1	268.0	206.7	737.1	31.7	200.8	-103.5
Ակտիվներ	-34.1	-27.5	-106.5	80.0	-88.1	113.0	-79.2	-206.3
Առևտրային վարկ	-3.1	-4.1	-4.4	-4.3	-16.0	-4.2	-4.0	-4.2
Այլ հատվածներ	-3.1	-4.1	-4.4	-4.3	-16.0	-4.2	-4.0	-4.2
Վարկեր	-19.8	2.4	4.6	29.5	16.7	68.6	-7.1	-11.6
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	0.6	-	0.4	0.3	1.2	0.2	0.2	0.2
Բանկեր	-20.3	3.0	4.9	30.1	17.7	69.6	-9.2	-11.6
Այլ հատվածներ	-0.1	-0.6	-0.7	-0.8	-2.3	-1.2	1.9	-0.3
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-0.9	-28.3	-99.3	56.6	-71.9	25.4	-31.7	-189.7
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Բանկեր	-4.0	-17.6	-11.1	1.4	-31.3	22.9	-73.2	-78.2
Այլ հատվածներ	3.1	-10.6	-88.3	55.19	-40.63	2.5	41.5	-111.5
Այլ ակտիվներ	-10.2	2.4	-7.3	-1.8	-16.9	23.2	-36.3	-0.8
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-0.2	2.4	-1.9	-1.3	-1.0	0.9	-0.2	0.1
Պետական կառավարման մարմիններ	-1.3	-0.4	-0.6	-0.1	-2.3	-1.7	-0.6	-
Բանկեր	-8.1	2.9	-6.7	-0.1	-12.0	24.4	-35.1	-0.6
Այլ հատվածներ	-0.6	-2.4	1.8	-0.2	-1.5	-0.5	-0.4	-0.4
Պարտավորություններ	167.5	156.6	374.5	126.7	825.3	-81.3	280.0	102.8
Առևտրային վարկ	0.8	2.9	20.4	3.2	27.3	25.4	24.9	9.6
Այլ հատվածներ	0.8	2.9	20.4	3.2	27.3	25.4	24.9	9.6
Վարկեր	96.3	93.0	214.2	160.3	563.7	-13.2	235.8	-10.6
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-0.3	-11.8	28.7	42.2	58.8	7.9	-6.5	-26.2
ԱՄՀ-ի վարկի օգտագործում	-0.3	-11.6	27.9	16.2	32.2	-	-15.1	-31.1
Մուտքեր	1.6	2.5	30.2	29.1	63.4	2.0	28.5	1.9
Վճարումներ	-1.9	-14.1	-2.3	-12.9	-31.2	-2.0	-43.7	-33.0
Այլ երկարաժամկետ	-	-0.2	0.8	26.0	26.6	7.9	8.6	4.9
Պետական կառավարման մարմիններ	23.2	33.8	100.5	58.0	215.5	60.8	116.4	19.6
Մուտքեր	36.2	53.6	114.3	80.0	284.0	73.9	137.7	54.6
Վճարումներ	-13.0	-19.7	-13.8	-22.0	-68.5	-13.1	-21.3	-35.0
Բանկեր	39.6	85.0	100.2	66.7	291.5	-10.0	160.9	31.8
Այլ հատվածներ	33.8	-14.0	-15.3	-6.6	-2.1	-72.0	-34.9	-35.8
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	76.2	40.7	135.8	-38.8	213.9	-95.5	17.8	101.6
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-0.1	0.2	0.1	-0.3	-0.1	-0.1	-	0.1
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-
Բանկեր	76.3	40.5	135.7	-38.5	214.0	-95.4	17.7	101.5
Այլ հատվածներ	-	-	-	-	-	-	-	-
Այլ պարտավորություններ	-5.8	20.0	4.2	2.0	20.3	2.0	1.5	2.1
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-	-0.1	-	-0.1	-0.2	0.1	-	-
Պետական կառավարման մարմիններ	-	-	-	-	-	-	-	-

1	2	3	4	5	6	7	8	9
Բանկեր	-4.7	5.1	-2.3	-1.3	-3.2	-2.3	1.1	0.5
Այլ հատվածներ	-1.2	15.0	6.5	3.3	23.7	4.2	0.4	1.7
Պահուստային ակտիվներ	76.7	56.4	-218.4	-47.6	-132.9	165.1	4.8	-3.1
Մոնետար ոսկի	-	-	-	-	-	-	-	-
Հատուկ փոխառության իրավունքներ	2.9	15.4	0.5	-41.9	-23.1	3.0	-6.0	53.7
ԱՄՀ-ում պահուստային դիրք	-	-	-	-	-	-	-	-
Արտարժութային ակտիվներ	74.0	40.8	-218.9	-5.7	-109.8	162.1	10.8	-56.9
Կանխիկ արտարժույթ և ավանդներ	15.0	19.7	-107.5	-127.5	-200.3	229.8	64.0	-287.8
Դրամավարկային կարգավորման մարմիններում	42.0	25.6	-70.6	-33.4	-36.3	205.2	-58.4	-299.9
Բանկերում	-27.0	-5.9	-37.0	-94.1	-164.0	24.7	122.4	12.1
Արժեթղթեր	59.0	20.7	-111.6	122.0	90.0	-67.8	-53.0	231.3
